ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650035
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am

N 02/0224

20 01 2020թ.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԷԼԻՆԱ ԳՅՈՒՐՋՅԱՆ

Հարգելի՛ տիկին Գյուրջյան

Ի պատասխան Ձեր՝ 15.01.2020թ հարցման, տեղեկացնում եմ, որ

1.Տեղեկատվություն տրամադրելու նպատակով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքէջի (http://gegharkunik.mtad.am/) համապատասխան ենթաբաժնում (http://gegharkunik.mtad.am/teghektvstanalukarg/) տեղադրված է տեղեկատվություն ստանալու իրավունքը և կարգը:

2.Պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգին վերաբերող տեղեկատվությունը հանրությանը իրազեկվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջի , մարզպետարանի ֆեյսբուքյան էջի և մարզային թերթի միջոցով:

3.ՀՀ Գեղարքունիքի մարզպետը յուրաքանչյուր հաջորդ տարվա սկզբին իր գործունեության մասին ներկայացնում է տարեկան հաշվետվություն: Մարզպետը նաև իր գործունեության վերաբերյալ տարին առնվազն երկու անգամ հանդես է գալիս մամուլի ասուլիսով: Հանրությանը այդ մասին տեղեկացնելու նպատակով դրանց վերաբերյալ տեղեկատվություն է տեղադրված ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքէջի համապատասխան բաժիններում, հետևյալ հասցեներով. http://gegharkunik.mtad.am/news/item/2017/10/10/asss/,http://gegharkunik.mtad.am/news/item/2017/12/29/assss/,http://gegharkunik.mtad.am/news/item/2018/09/07/ULIS/,http://gegharkunik.mtad.am/news/item/2019/01/23/asulis/,http://gegharkunik.mtad.am/news/item/2019/10/18/1/,http://gegharkunik.mtad.am/files/docs/32072.pdf,http://gegharkunik.mtad.am/files/docs/28256.pdf,http://gegharkunik.mtad.am/files/docs/37093.pdf,http://gegharkunik.mtad.am/files/docs/45033.pdf: Նշված տեղեկատվությունները հրապարակվել են նաև մարզպետարանի ֆեյսբուքյան էջի, մարզային թերթի, մարզային հեռուստաընկերության միջոցով:

4.Տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատուի վերաբերյալ տվյալները տեղադրված են ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքէջի /http://gegharkunik.mtad.am/ համապատասխան բաժնում http://gegharkunik.mtad.am/address/ :

5.Քաղաքացիական ծառայողների մրցույթն անցկացվում է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշմամբ սահմանված կարգով:

6.Ձեր նշված տեղեկատվությունը հասարակական կազմակերպություններին և զանգվածային լրատվամիջոցներին ներկայացվում է բացառապես օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն՝ հաշվի առնելով անձնական տվյալների տրամադրման գաղտնիությունը:

Հարգանքով՝

Недействительная подпись

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող՝ Տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժնի վարիչ
Հ.Շահբազյան
Հեռ. 060 65 06 37